

Հաստատված է  
**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ**  
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)  
 Ամբիոնի պետի ժ/պ \_\_\_\_\_ Հ.Խաչատրյան  
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ  
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

<b>ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ</b>	ՀՀ քրեական իրավունք 1
<b>ՖԱԿՈՒԼՏԵՏ</b>	Իրավագիտություն, անվճար ուսուցում
<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	Իրավագիտություն
<b>ԱՍԲԻՈՆ</b>	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
<b>ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ</b>	Մ.Մարկոսյան (ի.գ.թ., դոցենտ), E-mail: <a href="mailto:misakmmm100@mail.ru">misakmmm100@mail.ru</a> , հեռ. 093 60 15 70
<b>ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ</b>	2-րդ կուրս, 3-րդ կիսամյակ
<b>ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ</b>	բակալավր

<b>ԿՐԵԴԻՏՆԵՐ</b>	<b>4 (չորս)</b>
<b>ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ</b>	<p>«ՀՀ քրեական իրավունք 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունք, 16 ժամ գործնական պարապմունք, 56 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ընթացիկ ստուգմամբ:</p>
<b>ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ</b>	Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
<b>ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	«ՀՀ քրեական իրավունք 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, քրեական օրենքի հասկացությունը, ժամանակի ընթացքում և տարածության մեջ քրեական օրենքի գործողության առանձնահատկությունները, հանցագործության հասկացությունն ու տեսակները, հանցակազմի հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, քրեական պատասխանատվությունն ու դրա հիմքը, հանցագործության փուլերն ու հանցակցության ինստիտուտը:

<p><b>ԽՆՏԱՍԿ</b></p> <p><b>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</b></p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական իրավունքի հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, սկզբունքների, քրեական օրենքի հասկացության, ժամանակի ընթացքում և տարածության մեջ քրեական օրենքի գործողության առանձնահատկությունների, հանցագործության հասկացության ու տեսակների, հանցակազմի հասկացության, տարրերի ու հատկանիշների, քրեական պատասխանատվության ու դրա հիմքի, հանցագործության փուլերի ու հանցակցության ինստիտուտի վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները,</li> <li>• ուսումնասիրել քրեական իրավունքի սկզբունքները,</li> <li>• սահմանել քրեական օրենքի հասկացությունը,</li> <li>• վեր հանել ժամանակի ընթացքում և տարածության մեջ քրեական օրենքի գործողության առանձնահատկությունները,</li> <li>• ներկայացնել հանցագործության հասկացությունն ու տեսակները,</li> <li>• ներկայացնել հանցակազմի հասկացությունը, տարրերն ու հատկանիշները,</li> <li>• ուսումնասիրել քրեական պատասխանատվությունն ու դրա հիմքը,</li> <li>• ներկայացնել հանցագործության փուլերը և դրանց տարբերիչ հատկանիշները,</li> <li>• ուսումնասիրել հանցակցության ինստիտուտը:</li> </ul>
<p><b>ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b></p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. սահմանել քրեական իրավունքի հասկացությունը, համակարգը և խնդիրները,</li> <li>2. բացահայտել քրեական իրավունքի առարկայի բովանդակությունը,</li> <li>3. ներկայացված կոնկրետ իրավիճակում հայտնաբերել քրեական իրավունքի կոնկրետ սկզբունքի խախտումը,</li> <li>4. ներկայացված կոնկրետ իրավիճակում որոշել հանցագործության կատարման պահը և ճիշտ լուծել քրեական օրենքի հետադարձ ուժի հարցը,</li> <li>5. տարբերել տարածության մեջ քրեական օրենքի գործողության սկզբունքները,</li> <li>6. տալ հանցագործության հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները,</li> <li>7. տրված ելակետային տվյալների հիման վրա որոշել հանցագործության տեսակը,</li> <li>8. բացահայտել հանցակազմի տարրերի բովանդակությունը,</li> <li>9. ներկայացնել քրեական պատասխանատվության և պատժի տարբերությունները,</li> <li>10. մատնանշել հանցագործության նախապատրաստության և հանցափորձի տարբերիչ հատկանիշները,</li> <li>11. սահմանել հանցակցության հասկացությունը,</li> <li>12. ներկայացված կոնկրետ իրավիճակում ճիշտ իրավաբանական գնահատական տալ հանցակցի արարքին:</li> </ol>

<p><b>Հիմնական</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ</li> <li>2. Ս.Առաքելյան և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2012,</li> <li>3. Գ.Թ.Գրիգորյան, Մ.Ս.Սարկոսյան ՀՀ վճարելի դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիրառման վերաբերյալ/Երկրորդ լրամշակված հրատարակություն/Երևան, &lt;&lt;Արման Ասմանգուլյան&gt;&gt; ԱԶ տպարան, 2015թ., 300 էջ,</li> <li>4. Գրիգորյան Մ.Վ., ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Հրագրան, 2003թ.</li> <li>5. Уголовное право. Общая и особенная части/ Под ред. Н.Г. Кадникова.- М.: “Городец”, 2006.</li> <li>6. Ветров Н.И. Уголовное право. Общая и Особенная части.- М.: “Книжный мир”, 2005.</li> <li>7. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации/ Под общ. ред. В.М.Лебедева. - М.: «НОРМА», 2004.</li> </ol>
<p><b>Լրացուցիչ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ա.Ֆիդանյան Երկկողմ հետապնդումը որպես հանցանք կատարած անձի արտահանձնման պայման //Բանբեր Երևանի համալսարանի, 2014, N 3 (144), էջեր 38-47:</li> <li>2. Լ.Գրիգորյան Քրեական պատասխանատվությունը հանցագործության միջնորդավորված կատարման համար// Պետություն և իրավունք, 2015, N 1 (67), էջեր48-53:</li> <li>3. Լ.Գրիգորյան Հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման կատարելագործման հեռանկարները//Պետություն և իրավունք, 2016թ., թիվ 1 (71), էջեր 87-94:</li> <li>4. Լ.Գրիգորյան Հանցագործության միջնորդավորված կատարման իրավական կարգավորումն արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ//Օրենքի պատվար, 2016 թ., թիվ 1, էջեր 35-45:</li> <li>5. Филимонов В.Д. Норма уголовного права. СПб., 2004.</li> <li>6. Гаухман Л.Д. Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005,</li> <li>7. Аветисян С.С. Специальный субъект преступления и уголовная ответственность. -Ереван, 2003.</li> <li>8. Рагог А.И. Квалификация преступлений по субъективным признакам. СПб., 2003.</li> </ol>

<p><b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԴՐՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ</b></p>	<p>Ստուգարք (ստուգված, չստուգված)</p>
<p><b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ</b></p>	<p>Մովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Մովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Մովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, զրազետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում քննարկում</p>

	<p>որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p><b>Ներկայություն</b></p> <p><b>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</b></p> <p><b>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</b></p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

**ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ**

<b>Թեմա 1</b> <b>Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, խնդիրները և համակարգը</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցերը</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Քրեական իրավունքի հասկացությունը և առարկան</li> <li>2. Քրեական իրավունքի համակարգը</li> <li>3. Քրեական իրավունքի խնդիրները</li> </ol>	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p> <p>Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում այն իրավաբանական և ոչ իրավաբանական առարկաները, որոնց հետ կապված է քրեական իրավունքը:</p> <p>Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են քրեական իրավունքի հասկացությունը, խնդիրներն ու առարկան և համակարգը, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:</p>

<b>Թեմա 2</b> <b>Քրեական իրավունքի սկզբունքները</b> <b>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը</li> <li>2. Օրինականության սկզբունքը</li> <li>3. Օրենքի առջև հավասարության սկզբունքը</li> <li>4. Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը</li> <li>5. Անձնական պատասխանատվության սկզբունքը</li> <li>6. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը</li> <li>7. Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը</li> <li>8. Մարդասիրության սկզբունքը</li> </ol>	<p>Հարցեր 1-8 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 2,3,5,6 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են գործնական պարապմունքին՝ քրեական իրավունքի նշված սկզբունքների վերաբերյալ:</p> <p>Հարցեր 4,7,8 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողները քրեական օրենսգրքից առանձնացնում են այն հոդվածները, որոնք բխում են նշված սկզբունքների բովանդակությունից:</p> <p>Հարցեր 2-8 – անցկացվում է գործնական պարապմունք, որի ընթացքում սովորողները կատարում են իրավիճակային խնդիրների լուծում, գտնում կոնկրետ իրավիճակում կոնկրետ սկզբունքի խախտումները և հիմնավորում սեփական տեսակետը:</p>

<b>Թեմա 3</b> <b>Քրեական օրենք</b> <b>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
--	--

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> <li>1. Քրեական օրենքի հասկացությունը: Քրեական իրավունքի աղբյուրները</li> <li>2. Քրեական օրենքի կառուցվածքը</li> <li>3. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի մեջ</li> <li>4. Քրեական օրենքի հետադարձ ուժը</li> <li>5. Քրեական օրենքի գործողությունը տարածության վրա</li> <li>6. Հանցանք կատարած անձնաց հանձնելը</li> </ol>	<p>Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն:          Հարցեր 3-5 – ինքնուրույն աշխատանք:          Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը, և ըստ խմբերին նախապես տրված հանձնարարության դասախոսին ներկայացնում են ժամանակի մեջ և տարածության վրա քրեական օրենքի գործողության վիճահարույց իրավիճակներ դրանց լուծման սեփական մոտեցումներով:          Հարցեր 1-6 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները, կատարվում է դրանց խմբային քննարկում: Գատարվում է սովորողների հարցում:          Հարց 4. Գործնական պարապմունք. Դասախոսը ներկայացնում է իրավիճակային խնդիր, իսկ սովորողները ըստ խմբերի քննարկում են այն և առանձին-առանձին ներկայացնում խնդրի լուծումն ու հիմնավորումը:</p>

<b>Թեմա 4</b> <b>Հանցագործություն</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> <li>1. Հանցագործության հասկացությունը</li> <li>2. Հանցագործության հատկանիշները</li> <li>3. Հանցագործությունների դասակարգումը</li> </ol>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:          Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. սովորողները մշակում են իրավիճակներ, որոնցում հանցագործության հատկանիշներից մեկը բացակայում է:          Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները, կատարվում է նրանց գիտելիքների ստուգում հարցման միջոցով:          Հարց 3. Գործնական պարապմունք. Դասախոսի կողմից ներկայացված ելակետային տվյալների հիման վրա սովորողները որոշում են հանցագործության տեսակը:</p>

<b>Թեմա 5</b> <b>Հանցակազմ</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</b>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> <li>1. Հանցակազմի հասկացությունը</li> <li>2. Հանցակազմի տարրերը և հատկանիշները</li> <li>3. Հանցակազմի տեսակները</li> </ol>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:          Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում մատուցված նյութը:          Հարցեր 1-3. Սեմինար պարապմունք:</p>

	Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում՝ հարցման եղանակով: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակների ուսումնասիրման արդյունքում սովորողները որոշում են հանցակազմի տեսակը՝ ըստ դասակարգման հիմքերի:
--	--

<b>Թեմա 6</b> <b>Հանցագործության օբյեկտը</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցագործության օբյեկտի հասկացությունը 2. Հանցագործության օբյեկտի տեսակները	<p>Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն:</p> <p>Հարց 2- ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին՝ բերելով երկօբյեկտ հանցագործությունների օրինակներ՝ հիմնական և լրացուցիչ օբյեկտի նշմամբ:</p> <p>Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հանցագործության օբյեկտի հասկացությունը և տեսակները, կատարվում է դրանց խմբային քննարկում:</p>

<b>Թեմա 7</b> <b>Հանցագործության օբյեկտիվ կողմը</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը 2. Հանրորեն վտանգավոր արարք 3. Պատճառական կապ 4. Հանցագործության օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշները	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 2,4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ մշակում են իրավիճակներ գործողությամբ և անգործությամբ դրսևորվող հանցանքների մասին, ինչպես նաև առանձնացնում հանցանքներ, որոնցում պարտադիր է դառնում որևէ ֆակուլտատիվ հատկանիշ:</p> <p>Հարցեր 1-4: Սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են թեման, ինչպես նաև կազմակերպվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:</p> <p>Հարց 3. Գործնական պարապմունք: Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները հիմնավորում են դրանցում նկարագրված դեպքում պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը:</p>

<b>Թեմա 8</b> <b>Հանցագործության սուբյեկտը</b>
---

<b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները 2. Անմեղսունակություն 3. Պատասխանատվությունը հարբած վիճակում հանցանք կատարելու համար 4. Մահմանափակ մեղսունակություն 5. Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ 6. Հանցագործության հատուկ սուբյեկտ	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 2,5,6 – գործնական պարապմունք: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների խմբային քննարկման արդյունքում սովորողները հիմնավորում են սեփական մոտեցումները:

<b>Թեմա 9</b>	
<b>Հանցագործության սուբյեկտիվ կողմը</b>	
<b>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը 2. Մեղքը և դրա ձևերը 3. Դիտավորությունը և դրա տեսակները 4. Անզգուշությունը և դրա տեսակները 5. Պատասխանատվությունը մեղքի երկու ձևերով հանցագործության համար 6. Հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը 7. Մխալը և դրա քրեաիրավական նշանակությունը	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-7 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-7 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: Հարցեր 3,4,7 – գործնական պարապմունք: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների խմբային քննարկման արդյունքում սովորողները հիմնավորում են սեփական մոտեցումները:

<b>Թեմա 10</b>	
<b>Քրեական պատասխանատվություն</b>	
<b>(2 ժամ դասախոսություն)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Քրեական պատասխանատվության հասկացությունը 2. Քրեական պատասխանատվության հիմքը	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն՝ շեշտը դնելով քրեական պատասխանատվության և պատժի տարբերիչ հատկանիշների առանձնացման վրա:

<b>Թեմա 11</b>	
<b>Հանցագործության փուլերը</b>	
<b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցագործության փուլերի հասկացությունը 2. Հանցագործության նախապատրաստություն 3. Հանցափորձ 4. Հանցագործությունից կանոլին հրաժարվելը	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, անհասկանալի մնացած հարցերը



	ներկայացվում են դասախոսին: Հարցեր 2-4 – գործնական պարապմունք: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների խմբային քննարկման արդյունքում սովորողները հիմնավորում են սեփական մոտեցումները:
--	--

<b>Թեմա 12</b> <b>Հանցակցություն</b> <b>(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
1. Հանցակցության հասկացությունը 2. Հանցակիցների տեսակները 3. Հանցակցության ձևերը 4. Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները 5. Հանցակցի սահմանագանցում 6. Առնչակցություն	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, անհասկանալի մնացած հարցերը ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: Հարցեր 2-5 – գործնական պարապմունք: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների խմբային քննարկման արդյունքում սովորողները հիմնավորում են սեփական մոտեցումները:

## Հարցաշար

### «ՀՀ քրեական իրավունք 1» դասընթացի ընթացիկ ստուգման

1. Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները
2. Օրինականության սկզբունքը
3. Օրենքի առջև հավասարության սկզբունքը
4. Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը
5. Անձնական պատասխանատվության սկզբունքը
6. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը
7. Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը
8. Սարդասիրության սկզբունքը
9. Քրեական իրավունքի աղբյուրները
10. Քրեական օրենքի հասկացությունը, հատկանիշները և նշանակությունը
11. Դիսպոզիցիայի հասկացությունը և տեսակները
12. Սանկցիայի հասկացությունը և տեսակները
13. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
14. Քրեական օրենքի հետադարձ ուժը
15. Քրեական օրենքի գործողությունը ՀՀ տարածքում հանցանք կատարած անձանց նկատմամբ
16. Քրեական օրենքի գործողությունը ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած անձանց նկատմամբ
17. Հանցանք կատարած անձանց հանձնելը
18. Հանցագործության հասկացությունը և հատկանիշները
19. Հանցագործությունների դասակարգումը
20. Հանցակազմի հասկացությունը և նշանակությունը
21. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները
22. Հանցակազմի տեսակները
23. Հանցագործության օբյեկտի հասկացությունը և նշանակությունը
24. Հանցագործության օբյեկտի տեսակները
25. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը
26. Հանրորեն վտանգավոր գործողություն
27. Հանրորեն վտանգավոր անգործություն
28. Պատճառական կապի հասկացությունը և նշանակությունը
29. Հանցագործության հետևանքը, վայրը, ժամանակը, իրադրությունը, եղանակը, գործիքն ու միջոցը
30. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները
31. Անմեղսունակություն և դրա չափանիշները
32. Սահմանափակ մեղսունակություն
33. Պատասխանատվությունը հարբած վիճակում հանցանք կատարելու համար
34. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և նշանակությունը
35. Մեղքը որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, դրա նշանակությունը
36. Ուղղակի դիտավորություն
37. Անուղղակի դիտավորություն
38. Ինքնավստահություն
39. Անփութություն
40. Առանց մեղքի վնաս պատճառելը
41. Պատասխանատվությունը մեղքի երկու ձևերով հանցագործության համար
42. Հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը
43. Միսալը և դրա քրեաիրավական նշանակությունը
44. Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը
45. Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները
46. Հանցագործության նախապատրաստություն
47. Հանցափորձ, դրա տեսակները
48. Հանցագործությունից կամովին հրաժարվելը
49. Հանցակցության հասկացությունը և հատկանիշները
50. Հանցագործության կատարող

51. Հանցագործության կազմակերպիչ
52. Հանցագործության դրդիչ
53. Հանցագործության օժանդակող
54. Հանցակցության ձևերը
55. Հանցակիցների պատասխանատվությունը
56. Հանցակցի սահմանազանցում